Հաստատված է
ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի
2025 թվականի հունվարի 24-ի նիստում
(արձանագրություն N⁰ 01/25)

Վավերացնում եմ
ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի
նախագահ

Արման Խոջոյան
24-ը հունվարի, 2025թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգը սահմանում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ՀԱԱՀ) ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, մրցույթին մասնակցության, ընտրությունների անցկացման, ընտրված թեկնածուի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգերը:

1.2 ՀԱԱՀ ռեկտորի ընտրությունների կազմակերպման ծախսերը կատարվում է ՀԱԱՀ միջոցների հաշվին:

2. ՀԱԱՀ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1 ՀԱԱՀ-ում ռեկտորի թափուր պաշտոնի համար ՀԱԱՀ հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հայտարարում է բաց մրցույթ: Սույն կանոնակարգով նախատեսված մրցույթը կազմակերպվում է գործող ռեկտորի պաշտոնավարման ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան չորս ամիս և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ: Ռեկտորի պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման դեպքում Խորհուրդը մրցույթ կազմակերպում է իր հայեցողությամբ:

2.2 Մրցույթի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ ՀԱԱՀ պաշտոնական ինտերնետային կայքէջում տեղադրվում է մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը, որում զետեղվում է սույն կանոնակարգի «2.3» կետով սահմանված տեղեկատվությունը: Հայտարարության հրապարակումը կազմակերպում է ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի նախագահը (այսուհետ՝ նաև Խորհրդի նախագահ):

2.3 Հայտարարության տեքստում պարտադիր կարգով նշվում է.

ա) մրցույթի մասնակցելու համար դիմումների ընդունման վայրը և ժամկետը,

բ) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը,

գ) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ սույն կանոնակարգի «2.4» կետին համապատասխան

դ) հավակնորդին ներկայացվող պահանջները՝ սույն կանոնակարգի «3.2» կետին համապատասխան:

2.4 Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) լրացված դիմում ՀԱԱՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի անունով, որտեղ նշվում են հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որոնցից վերջին երկուսի իսկությունը և հասանելիությունը, ինչպես նաև կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը ստուգվում է անմիջապես,

բ) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը),

գ) ինքնակենսագրություն (CV),

դ) 2 գունավոր լուսանկար՝ 3 x 4 չափսի,

ե) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) և գիտական աստիճանը հավաստող վկայականը (բնօրինակները և պատճենները),

զ) առնվազն 5 տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժը հավաստող վավերացված տեղեկանք (փաստաթուղթ) կամ հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ,

է) հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ցանկ,

ը) տեղեկանք դատվածություն չունենալու մասին,

թ) տեղեկանք ղեկավար պաշտոն զբաղեցնելու սահմանափակում չունենալու մասին,

ժ) տեղեկանք վերջին երեք տարիներին սնանկության պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար չլինելու մասին,

ի) ՀԱԱՀ զարգացման և բարեփոխման հայեցակարգ՝ փակ և ստորագրված ծրարով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

2.5 ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար հայտերի ընդունումը (փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը) պետք է լինի **ոչ շուտ, քան տվյալ մրցույթի մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող տասնհինգերորդ աշխատանքային օրը և** ավարտվում է մրցույթի անցկացումից առնվազն 10 օր առաջ:

2.6 ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալած և յուրաքանչյուր էջի

հետնամասում ստորագրած) հանձնվում է ՀԱԱՀ աշխատակազմի ղեկավարին՝ առձեռն:

2.7 Հավակնորդների՝ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերն ընդունելու նպատակով ՀԱԱՀ-ում բացվում է գործերի ընդունման գրանցամատյան՝ էջերի համարակալումով, կարված և կնքված:

2.8 Գրանցամատյանի լրացված էջը կնքվում և փակվում է յուրաքանչյուր օրվա ավարտին:

2.9 Փաստաթղթերը հավակնորդը առձեռն հանձնում է ՀԱԱՀ աշխատակազմի ղեկավարին, որը հավակնորդի դիմումի օրինակի վրա կատարում է ստանալը հավաստող նշագրում:

2.10 Հայտերը ընդունելիս՝ ՀԱԱՀ աշխատակազմի ղեկավարը ստուգում է սույն կանոնակարգի «2.4» կետով սահմանված փաստաթղթերի առկայությունը: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ **մեկ աշխատանքային օրվա ընթացքում** «2.4» կետում սահմանված կարգով ստուգված հեռախոսահամարին կամ էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն կամ նամակ ուղարկելով: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում: Հայտերի ընդունման սահմանված ժամկետն ավարտվելու հաջորդ օրը ՀԱԱՀ աշխատակազմի ղեկավարն ընդունված փաստաթղթերի փաթեթը, ուղեկցական գրությամբ, հանձում է Խորհրդի նախագահին: Ուղեկցական գրությունը պարունակում է հավակնորդների ցանկը և յուրաքանչյուր հավակնորդի մասին համառոտ տեղեկություն:

2.11 Խորհրդի նախագահը մրցույթի անցկացումից **առնվազն մեկ շաբաթ առաջ** Խորհրդի անդամներին է ուղարկում կամ առձեռն հանձնում հավակնորդների ցանկը և յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը:

3. ՀԱԱՀ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1 ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի թեկնածուներն առաջադրվում են ինքնաառաջադրմամբ:

3.2 ՀԱԱՀ ռեկտորի թեկնածու կարող է առաջադրվել և ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի գիտական աստիճան և առնվազն 5 տարվա ակադեմիական և գիտական գործունեության փորձ:

3.3 ՀԱԱՀ ռեկտոր չի կարող ընտրվել այն անձը՝

ա) որը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,

բ) որին օրենքի համաձայն արգելվում է ղեկավար պաշտոններ զբաղեցնել,

գ) որը նախընթաց 3 տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարված կազմակերպության ղեկավար:

3.4 ՀԱԱՀ ռեկտորն ընտրվում է բաց մրցույթի կարգով և ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի նիստում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով:

4. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱԱՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

4.1 Խորհրդի՝ ռեկտորի ընտրության նիստը (այսուհետ նաև՝ Նիստ) նախապատրաստում և ղեկավարում է Խորհրդի նախագահը: Նիստը դռնփակ է (բացառություն է արվում ռեկտորի պաշտոնի հավակնորդների համար: Նիստին, Խորհրդի համաձայնությամբ, կարող են ներկա լինել նաև պետական լիազոր մարմնի ներկայացուցիչներ):

4.2 Նիստի օրակարգը ներառում է հետևյալ հարցերը.

ա) հավակնորդների՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,

բ) հավակնորդների ծրագրերի ներկայացում,

գ) հավակնորդներին հարցերի ներկայացում և Խորհրդի անդամների ելույթներ,

դ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

ե) ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն,

զ) ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

4.3 Նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին:

4.4 Նիստում Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, սակայն ոչ պակաս, քան Խորհրդի անդամների ձայների կեսից ավելիով:

4.5 Օրակարգի առաջին հարցով Խորհրդի տվյալ նիստի քարտուղարը զեկուցում է ռեկտորի թեկնածուների՝ սույն կանոնակարգի պահանջներին բավարարելու հարցը: Հարցի ներկայացումից հետո զեկուցողը պատասխանում է առաջացած հարցերին: Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել անձին թեկնածուների ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորելով, թե սույն կանոնակարգի որ պահանջներն են խախտված: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը Խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության:

4.6 Օրակարգի երկրորդ հարցով Խորհրդի նախագահը ծրագրային ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տալիս է հավակնորդներին: Յուրաքանչյուր հավակնորդ ունի ոչ ավելի, քան 10 րոպե տևողությամբ ելույթի իրավունք: Յուրաքանչյուր հավակնորդի ելույթից հետո Խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի 1-ին հերթագրում, որից հետո Խորհրդի գրանցված անդամները, ըստ հերթականության, ստանում են թեկնածուին հարց տալու հնարավորություն: Թեկնածուին տրվող հարցերը

կարող են վերաբերվել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին կամ ծրագրային ելույթին: Հարցերն ու պատասխանները արձանագրվում են Խորհրդի տվյալ նիստի քարտուղարի կողմից:

4.7 Առաջին հերթագրման արդյունքում տրված հարցերին թեկնածուի պատասխանելուց հետո, Խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, հայտարարում է հարցերի 2-րդ հերթագրում՝ սույն կանոնակարգի «4.6» կետով նախատեսված կարգով:

4.8 Բոլոր թեկնածուներին ողղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է մտքերի փոխանակում, որի համար Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի ոչ ավելի, քան 5 րոպե տևողությամբ մեկ ելույթի իրավունք: Ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

4.9 Նիստը կարող է ընդմիջվել Խորհրդի որոշմամբ:

4.10 Եթե գաղտնի քվեարկությունը չի սկսվել մինչև ժամը 19:00-ը, Նիստն ընդմիջվում է մինչև հաջորդ օրը՝ ժամը 09:00-ը՝ անկախ նրանից, հաջորդ օրն աշխատանքային է, թե ոչ: Եթե գաղտնի քվեարկությունը սկսվել է մինչև ժամը 19:00-ը, ապա Նիստը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

5. ՀԱԱՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

5.1 Նիստում քննարկումից հետո Խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, հրապարակում է հավակնորդների անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

5.2 Խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության կարգը:

5.3 Խորհուրդն իր կազմից ընտրում է 5 անդամից բաղկացած հաշվիչ հանձնաժողով (այսուհետ նաև՝ Հանձնաժողով)՝ հետևյալ կարգով.

- խորհրդի անդամներն ինքնաառաջադրվում կամ առաջարկում են Հանձնաժողովի անդամների թեկնածուներ,
- յուրաքանչյուր անդամի առաջադրումից հետո կազմակերպվում է քվեարկություն,
- հանձնաժողովը ձևավորվում է առավելագույն «կողմ» ձայներ ստացած հինգ թեկնածուներից:

Եթե հինգերորդ տեղը զբաղեցրած թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ են հավաքում նաև այլ թեկնածուներ, ապա քվերակությունն ընթանում է տվյալ թեկնածուներից մեկին ընտրելու համար: Առաջադրումներն ու քվեարկությունները շարունակվում են մինչև հանձնաժողովի կազմի համալրումը:

5.4 Հանձնաժողովն իր կազմից ընտրում է Հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ընդ որում չի թույլատրվում քվեարկությունից ձեռնպահ մնալը:

5.5 Հանձնաժողովը՝

ա) կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

բ) հրապարակում է ՀԱԱՀ ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները:

5.6 Ռեկտորի ընրությունների քվեաթերթիկներն ստորագրվում են Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

5.7 Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկում թեկնածուների ազգանունները նշվում են այբբենական կարգով: Յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան դիմաց առկա է «կողմ եմ» գրառումով վանդակը: Քվեաթերթիկը պարունակում է նաև «բոլորին դեմ եմ» գրառումով վանդակ: Մեկ թեկնածուի դեպքում նրա ազգանվան դիմաց առկա են «կողմ եմ» և «դեմ եմ» գրառումներով վանդակներ:

5.8 Խորհրդի անդամը Հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրում է իր ազգանվան դիմաց:

5.9 Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

5.10 Քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի ազգանվան դիմաց՝ «կողմ» գրառմամբ վանդակում դնելով «V» նշանը: Եթե նա դեմ է բոլոր թեկնածուներին, ապա նշում է կատարում «բոլորին դեմ եմ» գրառմամբ վանդակում: Մեկ թեկնածուի դեպքում ընտրողը նշում է կատարում «կողմ եմ» կամ «դեմ եմ» գրառումներով վանդակներից միայն մեկում: Խորհրդի անդամը քվեաթերթիկը զետեղում է քվեատուփում:

5.11 Քվեարկությունն ավարտելուց հետո Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է մեկական քվեաթերթիկ, հայտարարում է քվեարկության արդյունքը և փոխանցում է Հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ, մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը, կարող է պահանջել քվեարկության դնելու քվեաթերթիկի վավերականության հարցը:

5.12 Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն կանոնակարգի 5.7 և 5.10 կետերի պահանջներին, կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում կամ սույն կանոնակարգի պահանջներին հակասող ցանկացած այլ խախտում:

5.13 Հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:

Արձանագրության մեջ գրառվում է՝

ա) քվեաթերթիկ ստացածների թիվը (ըստ ցուցակում առկա ստորագրությունների),

բ) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

գ) անվավեր քվեաթերթիկների թիվը,

դ) թեկնածու(ներ)ի ազգանուն(ներ)ը և յուրաքանչյուրի ստացած ձայները,

ե) «բոլորին դեմ» (մեկից ավելի թեկնածուների դեպքում) տրված ձայները:

Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկների հաշվման ընթացքի վերաբերյալ Հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը կարող է Հանձնաժողովին ներկայացնել գրավոր հատուկ կարծիք: Հանձնաժողովը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

5.14 Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ ցուցակը կազմվում է ըստ հավաքված «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականության:

5.15 Հանձնաժողովի նախագահը Նիստում հրապարակում է քվեարկության արդյունքները:

5.16 Քվեարկության արդյունքների հիման վրա Խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԱԱՀ ռեկտոր ընտրելու մասին,

բ) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) ընտրությունն անվավեր ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին,

դ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չնտրելու մասին:

5.17 ՀԱԱՀ ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը (50 տոկոսից ավելի ձայներ):

5.18 Եթե քվեարկությանը մասնակցել է ռեկտորի պաշտոնի մեկ կամ երկու հավակնորդ, և չի բավարարվել 5.17-րդ կետի պահանջը, ընտրությունը համարվում է չկայացած:

5.19 Եթե քվեարկությանը մասնակցել է երկուսից ավելի հավակնորդ, և չի բավարարվել 5.17-րդ կետի պահանջը, անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ, որին մասնակցում են առաջին փուլում առավելագույն ձայներ ստացած երկու հավակնորդները, իսկ եթե երկրորդի ցուցանիշն ունեն մեկից ավելի հավակնորդներ, նաև այդ հավակնորդները:

5.20 Երկրորոդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա Խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԱԱՀ ռեկտոր ընտրելու մասին,

բ) քվեարկության երրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

5.21 Երկրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացված, իսկ ռեկտորը համարվում է չընտրված, եթե թեկնածուները միասին չեն հավաքել Խորհրդի անդամների ձայների կեսից ավելի ձայներ:

5.22 Քվերակության երրորդ փուլն անցկացվում է այն դեպքում, եթե քվեարկության երկրորդ փուլի արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով

ձայներ: Երրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

5.23 Երրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա Խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԱԱՀ ռեկտոր ընտրելու մասին,

բ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

5.24 Երրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացած, իսկ ռեկտորը համարվում է չընտրված, եթե որևէ թեկնածու չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

5.25 Ռեկտորի ընտրության արդյունքը ձևակերպվում է Խորհրդի որոշման տեսքով: Որոշումը ստորագրում են Խորհրդի նախագահը և տվյալ նիստի քարտուղարը:

5.26 Ռեկտորի ընտրության գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը Խորհրդի նիստի արձանագրության հետ միասին պահվում են ՀԱԱՀում:

5.27 Ընտրությունների կանոնակարգի խախտումները և ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ օրենսդրությանբ սահմանված կարգով:

5.28 Ընտրությունները Խորհրդի կողմից ճանաչվում են անվավեր, եթե ընթանում են ՀՀ օրենսդրության, ՀԱԱՀ կանոնադրության, սույն կանոնակարգի էական խախտումներով:

5.29 Եթե խախտումները տեղի են ունեցել մինչև Նիստը, ապա ընտրություններն անվավեր ճանաչվելու դեպքում սահմանված կարգով հայտարարվում է նոր մրցույթ:

5.30 Եթե խախտումները տեղի են ունեցել Նիստում կամ քվեարկության փուլում, ապա ընտրություններն անվավեր ճանաչվելու դեպքում Խորհուրդը հայտարարում է նոր քվեարկություն:

5.31 ՀԱԱՀ ռեկտոր ընտրվելու դեպքում, Խորհրդի նախագահն ապահովում է ռեկտորի ընտրության արդյունքները ՀԱԱՀ հիմնադրին՝ հաստատման համար ներկայացումը և, ռեկտորի ընտրության արդյունքները հիմնադրի կողմից հաստատվելու դեպքում, ռեկտորի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր՝ օրենքով սահմանված ժամկետով: